ԳԵՒՈՐԳ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՍԱՊԵԿ ԵՐԵՑ ԿԱՖԱՑԻ 1610-1686

(ծննդյան 400 ամյակին)

Ղրիմի հայ գաղթօջախը ձևավորվել է արաբական արշավանքների ընթացքում, երբ Հայաստանից մեծաքանակ բնակչություն գաղթում և հաստատվում է Բյուզանդական կայսրության տարբեր մասերում, այդ թվում նաև Սև ծովի հյուսիսային ափերին: Գաղթօջախի բնակչության համալրումը շարունակվում է Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո՝ սելջուկ-թուրքերի արշավանքների, Բյուզանդիայի վարած կրոնական քաղաքականության հետևանքով, որի արդյունքում ավելի մեծ թափ է ստանում հայերի արտագաղթը բուն Հայաստանից: Մեծաքանակ բնակչություն հաստատվում է Կիլիկիայում, իսկ մի ստվար զանգված մնում է Ղրիմի թերակղզում:

Ղրիմի աշխարհագրական դիրքը իր բարենպաստ պայմաններով խթանում էր հայ գաղթականների տնտեսական, մշակութային և կրթական զարգացմանը, ծովային ճանապարհները լայն հնարավորություններ էին ընձեռում առևտրականներին տարբեր քաղաքների հետ տնտեսական հարաբերություններ ստեղծելու գործում: Հատկապես ԺԳ դարից հայ առևտրականները լայն գործունեություն են ծավալում Արևելք-Արևմուտքի միջև առևտուր իրականացնելու գործում, սերտ և շահավետ կապեր են հաստատում Իտալիայի, առհասարակ Միջերկրականի վաճառաշահ քաղաքների հետ և այնքան են հզորանում, որ սկսում են հանդես գալ ջենովացիներին վարկավորողների դերում[1]:

ԺԳ-ԺԴ դդ. Ղրիմի գաղութ են տեղափոխվում մեծ թվով հայեր ոչ միայն բուն Հայաստանից՝ կապված մոնղոլական տիրապետության վատթարացման հետ, այլ նաև Կիլիկիայից, երբ անկում է ապրում Կիլիկիայի հայկական թագավորությունը: Այս բնակչությունը սկսում է հսկայական դեր խաղալ հայկական համայնքի տնտեսական, առևտրական, մշակութային կյանքում: Այդ շրջանում Ղրիմը գտնվում էր թաթարական տիրապետության տակ: Վերջիններս մինչև մահմեդականություն ընդունելը բավականին հանդուրժող էին տեղի ազգությունների նկատմամբ, ավելին, խրախուսում էին հայերին առևտրի և արհեստների բնագավառում իրենց գործունեությունը ընդարձակելու՝ մեծ արտոնություններ շնորհելով: Սակայն տարածաշրջանում փոփոխություններ են սկսվում թաթարների դավանափոխությունից հետո: 1475-1783 թթ. Ղրիմը գտնվում էր թուրք-թաթարական բռնապետության ներքո: Սկսվում է հայերի մեծ արտագաղթ, բայց չնայած դրան Ղրիմի շատ քաղաքներում՝ հատկապես Կաֆայում, հայերը բնակչության ճնշող մեծամասնությունն էին կազմում: Սակայն նկատվում է տնտեսական բավական լուրջ անկում, հաստատվում է անկայուն քաղաքական իրավիճակ. թուրքական անընդհատ արշավանքները, պատերազմները Արևելյան Եվրոպայի տարածքում անհետք չէին մնում, մարդկանց առևանգումները, գերեվարություն-

---

1 Տե՛ս **Վ. Միքայելյան,** Ղրիմահայոց պատմություն, Եր., 1989, էջ 48-49:

ները եւ փրկագնով հետ վերադարձնելը սովորական երեւույթ էին դարձել: Այս իրադարձությունների մասին տեղեկություններ է հաղորդում Խաչատուր Կաֆացին 1649 թ. թվագրվող ժամանակագրութան մեջ. «Տալվէթքէրէ սուլթանն ի Գռռէլ սէֆէր էր, նոցա դայպուրն աւերել էր, բազում քաղաք պապալել էր, բազում մարդիք՝ այրք եւ կանայք, մանտր տղայք գերի արել էր եւ բազում գիրգ նոցա գերի վարել էր եւ ծ (50) հոգի մեր ազգէն Լուսաւորչի, եւ նոցա ազգէն անթիւ եւ անհամար գերիք զուգային, ճամփան բռնեց ձիւն եւ ցուրտն եւ սառնամանիքն, բազում գերիք եւ ասքէրք մեռան ի ճանապարհին, ցրտոյ եւ սառնամանեաց, բազում կառք եւ երիվարք մնաց ի ճանապարհին, բազում ընկերք իւրեանց թողին, բազումք ապրանք իւրեանց թողին, մալ եւ խազինայք ի ճանապարհին»[2]: Այսպիսիք էին Ղրիմի հայկական գաղթօջախի սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական զարգացումները:

Ղրիմի մանրանկարչական բեղմնավոր դպրոցի լավագույն ներկայացուցիչներից է Խաչատուր Խասապեկ Երեց Կաֆացին (1610-1686 թթ.), որ լինելով եւ՛ գրիչ, եւ՛ ծաղկող, եւ՛ կազմող, եւ՛ տաղագիր, եւ՛ ուսուցիչ՝ յուրաքանչյուր բնագավառում հասել է մեծ հաջողությունների: Թողնելով մանրանկարչական հետաքրքիր ժառանգություն, դաստիարակելով մանրանկարիչների նոր սերունդներ՝ Խասապեկը մեծ ներդրում ունի Ղրիմի հայ գաղութի արվեստի եւ մշակույթի զարգացման գործում:

Իր գործունեության ողջ ընթացքում նա գրել, ծաղկել է բազմաթիվ ձեռագրեր, որոնցից պասներկուսը պահվում են Ս. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում եւ թվագրվում են 1636-ից 1682թթ.՝ թ. 7409 Յայսմաւուրք թ. **7382** Յայսմաւուրք, թ. **7357** Յայսմաւուրք, թ. 6606 Աւետարան, թ. **7765** Աւետարան, թ. **7968** Աւետարան, թ. **1154** Ժողովածու, թ. **1558** Ժողովածու, թ. **2008** Ժողովածու, թ. 7794 Խորհրդատետր, թ. 7414 Ճաշոց:

Խաչատուր Խասապեկի մասին սակավ ուսումնասիրություններ են կատարվել:

1935թ. նրա մահվան 250-ամյակի կապակցությամբ Հ.Ներսես Ակինյանը հոդված է հրապարակել եւ հիմք ունենալով Խաչատուր Խասապեկի հիշատակարանները,կենսագրական տեղեկություններ է հաղորդում նրա մասին՝ որպես տաղանդավոր տաղագիրի,այնուհետեւ ներկայացնում է այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թ. 1636 Տաղարանից մի հատված:Ակինյանը նաեւ մեջբերում է Խաչատուր Խասապեկի աշակերտների թողած ձեռագրում հանդիպող հիշատակությունները,որոնք Խասապեկի մահը հիշատակում են մեծ ցավով՝ այպիսով ամբողջացնելով Խաչատուր Խասապեկի մասին մեր պատկերացումները ոչ միայն որպես ձեռագրեր կազմող եւ պատկերազարդող,տաղագիր,այլ նաեւ տաղանդաշատ ուսուցիչ,որին մեծ սիրով են հիշատակում աշակերտները:

Է. Կորխմազյանը Ղրիմի ողջ մանրանկարչական ժառանգության ուսումնասիրության շրջանակներում փոքր անդրադարձ է կատարել նաեւ Խասապեկին: Նա Խասապեկին ներկայացնում է ԺԷ դարի Ղրիմի մանրանկարիչների շարքում՝ իրավամբ շեշտելով, որ հեղինակը որոշակիորեն անտեսված է մնում իր ժամանակակիցների շարքում:

Ուսումնասիրելով Մատենադարանում պահվող ութ ձեռագրեր՝ Է. Կորխմազյանը նշում է, որ հեղինակը չի թողել թեմատիկ մանրանկարներ[3], սակայն ներկայիս ուսումնասիրության շրջանակներում դիտարկված թ. 1558 ժողովածուն բացահայտում է հեղինակի ծաղկած «Խաչելության» երկու տեսարան, ինչպես նաեւ առանձին սրբերի պատկերներ:

---

2 **Վ. Հակոբյան,** Մանր ժամանակագրություններ, հ.1, Եր.,1951թ,էջ 219-220:

3 Տե՛ս **Э. Корхмазян,** Армянская миниатюра Крыма, Ереван, 1972, էջ 181-182:

Խաչատուր Խասպեկը ծնվել է 1610 թ. Կաֆայում՝ ոմն Անդրեասի և Խանումի ընտանիքում, ունեցել է քույրեր, եղբայրներ, որոնց անունները, սակայն, հիշատակարաններում չի նշում: Ուսումը ստացել է Հովհաննես քահանայի մոտ: Երկար ժամանակ ստեղծագործել է Կաֆա քաղաքում: 1664 թ. նա Կոստանդնուպոլսում էր, սակայն չի նշվում, թե որքան ժամանակ է մնացել այնտեղ, այնուհետև վերադարձել է Կաֆա և մինչև կյանքի վերջ մնացել այստեղ: Մահացել է 1686 թ. հոկտեմբերի 29-ին, ինչի մասին իմանում ենք իր աշակերտների թողած հիշատակարաններից:

Խասպեկի գործերը ներառված են թ. **1636** և թ. **2394** ձեռագրերում, ինչպես նաև թ. **1836** տպագիր տաղարանում, որտեղ հանդիպում ենք հեղինակի քնարական, սիրային ստեղծագործություններին:

Խասպեկի ձեռագրերի քննությունը բացահայտում է հեղինակի սերտ կապը ինչպես Ղրիմի մանրանկարչական դպրոցի ավանդույթների, այնպես էլ ուշ միջնադարում այստեղ ձևավորված միտումների հետ, որոնք էապես տարբերվում էին դպրոցի վերելքի շրջանից: Ղրիմի մանրանկարչական դպրոցը իր ծաղկումն էր ապրում ԺԳ-ԺԴ դարերում: Դպրոցի ոճի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել այն հանգամանքը, որ Ղրիմ էին տեղափոխվում մեծ քանակությամբ գաղթականներ բուն Հայաստանից. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո այստեղ են տեղափոխվում բազմաթիվ կիլիկիահայ գաղթականներ, որոնք իրենց հետ բերում են կիլիկյան մանրանկարչության չքնաղ օրինակներ: Ղրիմի մանրանկարչական դպրոցի նոր ավանդույթների ձևավորմանը նպաստում էին նաև աշխարհագրական պայմանները. Ղրիմի վաճառականները աշխույժ առևտրական կապերի մեջ լինելով Միջերկրական ծովի ավազանի վաճառաշահ քաղաքների հետ՝ ազդվում էին տարբեր մշակութային շերտերից:

ԺԵ-ԺԶ դարերում տարածաշրջանում ձևավորվում է քաղաքական-տնտեսական բարդ իրադրություն, ինչից տուժում է նաև գրքարվեստը: Հետագայում, երբ տարածաշրջանում նորից խաղաղություն հաստատվեց և բարենպաստ պայմաններ ձևավորվեցին հայկական գաղութի կենսագործունեության համար, մանրանկարչական դպրոցի բնականոն ընթացքը խաթարված էր այնպես, որ այն չկարողացավ վերականգնել իր հարուստ ավանդույթները: Բացի այդ արդեն շրջանառության մեջ էին հայտնվել տպագիր գրքերը, որոնք բարդացնում էին ձեռագրարվեստի զարգացումը: Չնայած անկումային միտումներին՝ Ղրիմում շարունակում էր գործել մանրանկարչական դպրոցը.աշխատում էին բազմաթիվ գրիչներ, ծաղկողներ, կազմողներ, և ԺԷ դարից պահպանվել են հսկայական քանակությամբ ձեռագրեր:

Խաչատուր Խասպեկի հետ միաժամանակ Կաֆայում ստեղծագործող Նիկողայոս Ծաղկողը ևս թողել է շատ հարուստ գեղարվեստական ժառանգություն, պատկերազարդել է բազմաթիվ ձեռագրեր՝ մեծ մասամբ կրկնելով այլ ձեռագրերի մանրանկարներ: Սա տարածված միտում էր Ղրիմի ուշ շրջանի մանրանկարչության մեջ, սակայն յուրաքանչյուր հեղինակ վերամշակում է դրանք ուրույն ձևով՝ դրսևորելով սեփական ձեռագիրը: Նույնը կարելի է ասել նաև Խաչատուր Խասպեկի մասին, որը, չնայած չի թողել այնպիսի հսկայական ժառանգություն, ինչպես իր ժամանակակիցը, սակայն պահպանված ձեռագրերը արձանագրում են, որ հեղինակը գեղարվեստական մեծ կարողություններ է դրսևորել կիլիկյան մանրանկարչական դպրոցի նշանավոր ձեռագրերի մանրանկարները յուրովի մշակելիս:

Խաչատուր Խասպեկի ձեռագրերը տարբերվում են միմյանցից կատարումով, դա կապված է պատվիրատուի գործոնի հետ. շքեղ պատկերազարդված, ոսկու առատ կիրառում ունեցող ձեռագրերի կողքին տեսնում ենք մատյաններ, որոնք «աղքատիկ» են կատարված, ունեն մի քանի փոքր զարդագրեր:

Այս առումով առանձնապես հետաքրքիր է թ. 1558 ժողովածուն, որը թվագրվում է 1643 թ., ստացողը հենց Խասպեկն է: Ձեռագրում տեղ է գտնում հեղինակի ընդարձակ չափածո հիշատակարանը՝ ծավալվող մի քանի էջերի վրա:

Ձեռագիրն ունի առատորեն կիրառված գլխազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր, այստեղ են հանդիպում «Խաչելության» տեսարանները, Ներսես Շնորհալիի երկու պատկերները, Ներսես Լամբրոնացու պատկերը, Եդեսիա քաղաքը ներկայացնող շինությունների տեսարանները, լուսանցքներում՝ Սողոմոն թագավորի, հրեշտակապետի ֆիգուրները: Բայց քանի որ ստացողը հենց հեղինակն է, չենք նկատում գունային այն առատությունը, նրբագեղությունը, ինչպիսին հարուստ պատվիրատուներ ունեցող ավետարաններում ակնառու է: Այստեղ ոսկի չի կիրառված, այն փոխարինված է շագանակագույնի երանգներով, ներկերը անորակ են, կարմիրի փոխարեն հեղինակը կիրառում է նարնջագույն մուգ երանգ, Ներսես Շնորալիի դեմքը պատկերելիս օգտագործում է թղթի բնական գույնը՝ սեւով գծագրելով միայն աչքերը, քիթը, շրթունքները: Ֆիգուրների ձեռքերը մեկնաբանում է շատ ընդհանրացված, հագուստի ծալքերի լուծումը պայմանական եւ երկրաչափական է (սա վերաբերում է առանձին կանգնած սրբերի բոլոր պատկերներին): Ընդհանուր առմամբ ձեռագրի մանրանկարները թողնում են որոշակի «արհեստավորական» տպավորություն, բայց՝ միայն իրենց կատարման որակով, իսկ պատկերագրության մեջ տեսնում ենք բանիմաց մոտեցում, միգուցե, ինչպես իր հեղինակած ավետարանները, թ. 1558 ժողովածուն պատկերագրական առումով կրում է կիլիկյան մանրանկարչության դպրոցի ազդեցությունը: Ներսես Շնորհալիի պատկերագրության մեջ տեսնում ենք առանձին սրբերի պատկերման դասական մոտեցում. գիրքը ձեռքին՝ ճակատային դիրքով սրբի ֆիգուրը, վերեւից՝ Աստծո աջը:

Ուշադրության են արժանի «Խաչելության» տեսարանները, որոնք, ինչպես նշվեց, եզակի են Խաչատուր Խասպեկի ժառանգության մեջ: Կատարողական առումով դիտվում են նույն հատկությունները, ինչ առանձին կանգնած սրբերին ներկայացնող մանրանկարներում, իսկ պատկերագրական առումով ունեն հետաքրքիր լուծումներ: 254 էջին խաչված Քրիստոսի պատկերն է: Քրիստոսի լուսապսակը քառաթեւ աստղ է հիշեցնում, ինչը բնորոշ է հատկապես ուշ միջնադարյան պատկերագրությանը, չկան տեսարանին բնորոշ դրվագներ, միայն Քրիստոսի ոտքերի մոտ տեսնում ենք երկու գլուխ՝ հավանաբար Տիրամորը եւ Հովհաննես Ավետարանիչին ներկայացնող: 263 էջին միայն խաչված Քրիստոսի պատկերն է, խաչը, որին գամված է Քրիստոսը, թեւերի ծայրերին շողարձակում է:

**Թ. 7968 Ավետարանը** համաձայն հիշատակարանի թվագրվում է 1666 թ., գրիչը Հովակիմ երեցն է, ստացողը՝ ոմն Պարոն Խաչատուր, իսկ ձեռագրի մանրանկարների, ինչպես նաեւ արծաթյա կազմի հեղինակը Խաչատուր Խասպեկն է:

Արծաթյա կազմի վերին փեղկը պատկերում է չորս ավետարանիչների նստած ֆիգուրները, լատինատառ գրված են ավետարանիչների անունները, կենտրոնում էմալապատ, օվալաձեւ «Հոգեգալուստի» տեսարան է: Ետին փեղկի կենտրոնում ներկայանում է Տիրա-

մոր կանգնած ֆիգուրը, գրությունը նույնպես լափինապառ է, հարթության ծայրերին քերովբեների պատկերներ կան: Արծաթագործության մեջ դեռևս կիլիկյան շրջանից ընդունված էր նույն կաղապարով բազմաթիվ կազմեր ձուլելը: Այս դեպքում գործ ունենք ներմուծված կաղապարի հետ, ինչի մասին վկայում են լափինապառ գրությունները (հիշենք՝ Ղրիմի հայ վաճառականները առևտրական լայն շփումների մեջ են եղել իտալական քաղաքների հետ):

Ձեռագիրն ունի 277 թերթ, շքեղ զարդարված է մանրանկարներով, զարդագրերով, լուսանցազարդերով, չունի խորաններ, որոնք առկա են մյուս ավետարաններում, յուրաքանչյուր ավետարանիչի դիմանկարի կից էջին անվանաթերթերն են: Ավետարանիչների դիմանկարները շրջանակված են Խասպեկի չափածո հիշատակարաններով. մասնավորապես Հովհաննես ավետարանիչին պատկերող էջին է հանդիպում ձեռագրի թվագրությունը:

Մանրանկարները կատարված են ոսկու առատ կիրառումով, մեկ գույնի տարբեր երանգներով. բաց վարդագույնից մինչև վառ կարմիր: Դեմքերի մշակումը շատ մանրամասն է, գեղանկարչական մոտեցումով են պատկերված ավետարանիչների մազերը և մորուսները, ոսկե ֆոնից ավետարանիչների լուսապսակները բաժավում են կարմիր եզրագծերով. դա նույնպես կիլիկյան ավանդույթ է: Չնայած կատարողական ընդհանուր բարձր մակարդակին՝ հեղինակը որոշ դեպքերում դժվարություններ ունի. օրինակ՝ ձեռքերի մշակման առումով:

Պետք է նշել, որ Խաչատուր Խասպեկը, ինչպես ԺԷ դարի Ղրիմի դպրոցի բոլոր մանրանկարիչներ, դիմում է կիլիկյան շրջանում ստեղծված բարձր գեղարվեստական լուծումներ ունեցող ձեռագրերի մանրանկարների վերամշակումների, քանի որ ուշ միջնադարում մանրանկարչությունը համապարած անկում էր ապրում: Սակայն պետք է իմանալ, որ կիլիկյան ձեռագրերը Ղրիմի դպրոցում կրկնօրինակվում էին ոչ միայն ԺԷ դարում, այլ ավելի վաղ շրջաններում, մասնավորապես Կիլիկյան թագավորության անկումից անմիջապես հետո, երբ Կիլիկիայի հայ գաղթականները հաստատվում են Ղրիմում: Այսպիսով՝ ուշ շրջանում կիլիկյան մանրանկարների կրկնօրինակումները կարող են կատարված լինել օրինակներից, որոնք պահվում էին Կաֆայի գրչատներում:

**Ф. 6606 Ավետարան**ը կազմվել է 1668 թ., որպես ձեռագրի գրիչ հիշատակվում է տեր Խաչատուրը, ձեռագրի մանրանկարիչը՝ Խասպեկը, ստացողը՝ ոմն Ցեալչի: Ձեռագիրը ունի 279 էջ, կազմը արծաթյա է, սակայն հիշատակարաններում կազմողը չի նշվում: Ունի բազմաթիվ մանրանկարներ. Եւսեբիոսի նամակը, տասը խորանները, ավետարանիչների դիմանկարները՝ իրենց անվանաթերթերով, բազմաթիվ լուսանցազարդեր, զարդագրեր: Է. Կորխմազյանը նշում է, որ ձեռագիրը կրկնում է թ. 7644 Սմբատ Գունդստաբլի Ավետարանի մանրանկարները[4]: Վերջինս իհարկե հիմք է ծառայում Խասպեկի մանրանկարների համար, սակայն համեմատելիս շոշափելի են տարբերությունները. օրինակ՝ Եւսեբիոսի նամակում Խասպեկը բնագրից պահպանում է միայն ֆիգուրի ընդհանուր ուրվագիծը, իսկ դեմքերի մշակումը լրիվ տարբերվում է, որովհետև նա ներկայացնում է խիստ ոգեշունչ կերպար՝ բնօրինակի նրբագեղ ֆիգուրի հետ համեմատած: Եթե թ. 7644 ձեռագրում տեսնում ենք սիրամարգի պատկեր, բազմաթիվ թռչուններ՝ ռեալիստական լուծումներով, ապա Խասպեկի

4 Տե՛ս Э.] Корхмазян, էջ 181-182:

մշակմամբ պեսարանը կորցնում է թռչունների պատկերները, նա ներմուծում է բազմաթիվ դեկորատիվ զարդեր:

Խորանների պատկերները շատ տարբեր են, կից էջերի վրա տեղադրված խորանները ներկայացնում են նույն մոտիվները, սակայն հաջորդ զույգը` այլ մոտիվներ. մի դեպքում տեսնում ենք լուսնետների եռանկյուն, մի դեպքում կամարային լուծումներ: Տարբերվում են խորանների խոյակների պատկերները. մի դեպքում ներկայացվում են հերալդիկ մեկնաբանում ունեցող թռչունների, մի այլ դեպքում` արմավային կամ բարդ հյուսածո զարդամոտիվներ:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ուշ շրջանի հայկական մանրանկարչությունը բավական քիչ է ուսումնասիրված, այդ թվում նաեւ Ղրիմի գրքարվեստը, որի ականավոր ներկայացուցիչներից է Խաչատուր Խասապեկ Երեց Կաֆացին: Մանրանկարիչ, ծաղկող, տաղերգու, ուսուցիչ, կազմող Խաչատուր Խասապեկի մշակութային ժառանգությունը խիստ յուրօրինակ է մշակութային զարգացման իր ժամանակաշրջանի համար: Նրա տաղերը, որոնք իր մահից գրեթե երեսուն տարի անց գնահատվել եւ տեղ են գտել տպագիր տաղարաններում («Դ-պրութեան գիրք եւ տաղարան»` տպագրված 1714-ին, Կ. Պոլսում), մարդկայնության, սիրո, գեղեցիկի, Աստծո փառաբանության գործեր են, նրա թողած հիշատակարանները ամփոփ ներկայացնում են ժամանակի սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ հեղինակի կազմած ժամանակագրության մեջ տեսնում ենք նրա խորը, ցավագին ապրումները ազգակիցների ուսերին ընկած դառն փորձությունների կապակցությամբ` բացահայտելով նրան որպես ոչ միայն տաղանդաշատ ուսուցիչ եւ մանրանկարիչ, այլ նաեւ որպես մտավորական ու մեծ մարդասեր:

Նրա թողած ձեռագրերի ուսումնասիրությունը կարեւորվում է ԺԷ դարի Ղրիմի մանրանկարչության մասին պատկերացումները ամբողջացնելու առումով: Ճիշտ է հեղինակի պատկերազարդած ձեռագրերը քիչ են եւ չունեն այնպիսի ընդարձակ պատկերագրական շարքեր, ինչպիսին տեսնում ենք իր ժամանակակցի` Նիկողայոս Ծաղկողի ձեռագրերում, սակայն եղածն էլ բավական է բացահայտելու համար հեղինակի ունակությունները: Խաչատուր Կաֆացին հետեւում է Ղրիմի գաղթօջախում ԺԶ-ԺԷ դարերում ձեւավորված ընդհանուր օրինաչափությանը, համաձայն որի մանրանկարները կերտելիս օգտվում էին իրենց վանական համալիրներին կից գործող գրչատներում պահվող, ավելի վաղ ստեղծված ձեռագրերի մանրանկարներից, բայց յուրովի մեկնաբանում այդ օրինակները: Խաչատուր Խասապեկ Երեց Կաֆացու գունային նուրբ զգացողությունը, ոգեշունչ, ազդեցիկ կերպարներ ստեղծելու կարողությունը, անկրկնելի են դարձնում նրա ձեռագիրը` բացահայտելով նրան որպես տաղանդավոր մանրանկարիչ: